ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Երկրորդ ընթերցում

Պ-827-22.04.2024-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2004թ. նոյեմբերի 9-ի Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի (Այսուհետ՝ օրենսգիրք) 10-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ամուսնության կնքման համար անհրաժեշտ են ամուսնացող տղամարդու և կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունը և նրանց ամուսնական՝ տասնութ տարեկան տարիքի հասնելը:»:

Հոդված 2. Օրենսգրքի 21-րդ հոդվածի «ա» կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենսգրքի 22-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «, կամ եթե դա են պահանջում անչափահաս ամուսնու շահերը, ինչպես նաև ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին անչափահաս ամուսնու համաձայնության բացակայության դեպքում» բառերը:

Հոդված 4. Օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «ինչպես նաև սահմանված կարգով երեխաների ամուսնանալու, » բառերը:

Հոդված 5. Օրենսգրքի 50-րդ հոդվածից հանել «ամուսնության մեջ չգտնվող» բառերը:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2004թ. նոյեմբերի 9-ի Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի (Այսուհետ՝ օրենսգիրք) 10-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ամուսնության կնքման համար անհրաժեշտ են ամուսնացող տղամարդու և կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունը և նրանց ամուսնական՝ տասնութ տարեկան տարիքի հասնելը:»:

Հոդված 2. Օրենսգրքի 21-րդ հոդվածի «ա» կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենսգրքի 22-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «, կամ եթե դա են պահանջում անչափահաս ամուսնու շահերը, ինչպես նաև ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին անչափահաս ամուսնու համաձայնության բացակայության դեպքում» բառերը:

Հոդված 4. Օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «ինչպես նաև սահմանված կարգով երեխաների ամուսնանալու, » բառերը:

Հոդված 5. Օրենսգրքի 50-րդ հոդվածից հանել «ամուսնության մեջ չգտնվող» բառերը:

Հոդված ~~5~~6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»(Պ-827-22.04.2024-ՊԻ-011/1), «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»(Պ-827.1-22.04.2024-ՊԻ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	**Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը**	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկություն (փոփոխություն, լրացում)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
1.	ԱԺ պատգամավոր Ռուստամ Բաքոյան	«ՀՀ ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդված	Նախագծի 5-րդ հոդվածով առաջարկվում է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 50-րդ հոդվածից հանել «ամուսնության մեջ չգտնվող» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	ԱԺ պատգամավոր Ռուստամ Բաքոյան	Օրենքների նախագծերի փաթեթն առաջարկվում է լրացնել նոր օրենքի նախագծով՝ «ՀՀ վարչական	Նախագծով առաջարկվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:	Ընդունվել է:	Ընդունվել է:

		դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին»			